սակ դժուարութիւններ։ Աւստրիան չէ խառնվում այնպիսի գործերում, որի մէջ ինքը անմիջական շահեր չունի։ Այդ բանը արգելում է նրան իր քաղաքական պրինցիպները և պարլամենտի կամքը, որը ամեն սահմանադրական կառավարութիւն պարտաւոր է յարգել։

ՖՐԱՆՍԻԱ

Հանրապետական մեծամասնութեան առաջնորդը Ֆրանսիայի մէջ դեռ ևս չէ ընդունել մինիստրի պաշտօն, մինչդեռ նրա դէմ ընդդիմադրական կուսակցութիւն է կազմվում վերջին ընտրութիւններից յետոյ Գամբետտա աւելի մօտեցաւ չափաւոր կենտրոնին և դրա համեմատ էլ մեծացաւ նրա գործնական ազդեցութիւնը միջին և բարձր դասերի վրա, մինչդեռ նա կորցրեց իր հեղինակութիւնը միջակ դասի մէջ։ Այժմ Գամբետտա անհրաժեշտ մարդ է դառել բուրժուազիայի համար և ֆրանսիական ժողովրդի ամբողջ միջին դասը ցանկանում է, որ շուտով նա մինիստրութիւն կազմի։ Գամբետտայի ազգարարութեան հրաժարվելուց յետոյ, որ ուղղված էր Բէլվիլի անհաշտներին, նա այլ ևս արմատական չէ համարվում. Գամբետտա այլ ևս ստորին դասի ձայնատարը չէ. Նա այժմ գրաւված է արդիւնաբերական ընդարձակ շահերով և այդպիսով նա հեղինակութիւն է ստացել հասարակութեան միջին և բարձր դասերի մէջ։ Այդպիսով նա ապահով է, որ երկար ժամանակ կարող է կառավարել երկիրը, թէպէտ նրա գլութեանը այսուհետև կը սկսեն մնալ իր նախկին համախոհները։ Դեռ այժմ Լուի-Բլանի նման մարդիկ ընդդիմանում են Գամբետտայի և նրա կուսակցութեան իշխանութեանը։ «Rappel» լրագիրը, որ մինչև այժմ պաշտպանում էր Գամբետտային, պատգամաւորների ժողովի ժամանակաւոր նախագահի գործողութիւնները չափազանց անձնական է անուանում և պախարակում է պատգամաւորների ժողովի մեծամասնութեանը Գամբետտային կուրօրէն հպատակելու համար։ Շատ հանրապետականներին վիշտ է պատճառում այն հանգամանքը, որ Գամբետտա հարկաւոր չէ համարում բացատրել իր քաղաքական նախագիծը և առաջարկում է խըմբել իր անձնաւորութեան շուրջ առանց քննելու նրա հայեացքները և սկզբունքները։ Պատգամաւորների ժողովը նրան իր նախագահ ընտրեց և այդպիսով մատնացոյց եղաւ նրա վրա իբրև ապագայ մինիստրութեան առաջնորդի վրա։ Մի և նոյն ժամանակ այդ մինիստրութեան նպատակների և ուղղութեան մասին խորհրդակցութիւններ չէին կատարվել։ Գամբետտային կուսակից պատգամաւորները նրան անպայման հաւատ ընծայեցին և այժմ նա կարող է հետևել իր ցանկացած քաղաքականութեանը։

Պատգամաւորների ժողովի առաջին նիստին Գամբետտա ժամանակաւոր նախագահ ընտրվեցաւ։ Երկրորդ նիստին Գամբետտա շնորհակալութիւն յայտնեց իր ընտրութեան համար հետևեալ խօսքերով. „Պարոններ, բռնելով ժողովի նախագահի պատւաւոր տեղը, ես ամենից առաջ պէտք է յայտնեմ պատգամաւորներին իմ շնորհակալութիւնը։ Ես կաշխատեմ արժանաւոր գտնել այն պատւին, որ ժողովը ցոյց տուեց ինձ երէկ։" Այնուհետև Լուի-Բլան առաց հետևեալը։ „Պարոններ, երէկվայ նիստի ընկերին խօսք խնդրելով, ես մտադիր էի առաջարկել պատգամաւորների ժողովին ընտրել ժամանակաւոր նախագահ։ Այս հարցը պէտք է հերթական դառնար և քննվէր։ Այդ չը կատարելով, ժողովը անկանոն վարվեցաւ, որ անուշադիր չէ կարելի թողնել։ Պատգամաւորները չը պէտք է հպատակվէին անպայման տեղերից առաջացող նշանադրութիւններին։ Իմ խօսքերի վրա հարկաւոր էր ուշադրութիւն դարձնել։ Ես և իմ բարեկամները բողոքում ենք երէկվայ քուէարկութեան դէմ ժամանակաւոր նախագահի վերաբերութեամբ։" Այնուհետև վիճաբանութիւններից յետոյ, ժողովը այդ յայտնութիւնը անուշադիր թողեց։

ԱՆԳԼԻԱ

Անգլիական շաբաթաթերթերը, մանաւանդ „Economist" մանրամասնաբար քննում են իտալական թագաւորի Վիէննա գնալը և այդ ճանապարհորդութեանը քաղաքական մեծ նշանակութիւն են տալիս։ Այդ ճանապարհորդութեան գլխաւոր նպատակ են համարում Իտալիայի համաձայնութիւնը, որ Աւստրիան գրաւէ Սալօնիկի, իսկ այդ գործը իբր թէ պէտք է կատարվի եկող գարնանը։ Միւս կողմից Գերմանիան և Աւստրիան ապահովում են Իտալիայի ամբողջութիւնը և խոստանում են պաշտպանել նրա քաղաքականութիւնը Ֆրանսիայի դէմ հիւսիսային Աֆրիկայում Տունիսի արշաւանքը հեռացրեց Իտալիային Ֆրանսիայից, վերջինին առանձնացրեց, մինչդեռ Իտալիան մասնակցում է միջին-եւրոպական դաշնակցութեանը։

Նօւայի մէջ արտասանած Գլադստոնի ճառի մեծ մասը նուիրված էր իրլանդական գործերին։ „Իրլանդիայի մէջ, ասել է նա, հարց է ծագում, արդեօք այդ երկիրը պէտք է կառավարվի կանօնաւորապէս ընտրված և պարլամենտի հաւանութիւնը ստացած օրէնքների համեմատ, կամ թէ ամենքին անյայտ, ոչ մի տեղ չը գրված օրէնքներով, որոնք մի խումբ մարդկերանց հեղինակութիւն են և այդ խմբից են գործադրվում։ Կառավարութիւնը, ճնշելով այդ խմբին, գործում է ոչ այնքան օրէնքները և կարգապահութիւնը պահպանելու համար, որքան նոյն իսկ իրլանդացիների ազատութիւնը և ապահովութիւնը պաշտպանելու նպատակով"։ Գլադստօն ուրախութիւն յայտնեց Դուբլինի քաղաքային վարչութեան վճռի առիթով, երբ նրան առաջարկվեցաւ Պարնելին և Սեկստօնին Դուբլինի պատուաւոր քաղաքացիութիւնը տալ։ Վարչութիւնը մերժել է այդ առաջարկութիւնը։ Իրլանդիայի մայրաքաղաքը շատ քչերին ցոյց է տալիս այդպիսի պատիւ։ Գլադստօնն էլ միայն մի քանի տարի առաջ արժանացել է այդ պատւին։ Դուբլինի վարչութեան մերժումը մեծ նշանակութիւն ունի, որովհետև այդ վարչութիւնը իրլանդական ազգասիրութեան կենտրոն է համարվում։ Գլադստօնի կարծիքով պարլամենտի հաստատած հողաւածական օրինագիծը Իրլանդիային հանգստութիւն և բարօրութիւն կը պատճառէ։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 17 հոկտ.

Մայրաքաղաքիս «Ստամպուլ» ֆրանսերէն լրագիրն հետևեալ խմբագրական յօդուածն հրատարակեց երէկի օրը։

«Հայոց Ներսէս պատրիարքը այս օրերս յունաց պատրիարքի փոխանորդը ընդունած ժամանակ, հայոց մեծամեծներու վերաբերմամբ մէկ քանի խօսք արտասանեց, որք թէպէտ խիստ էին, բայց նոցա համար արժանի մնացածն։

«Հայոց պատրիարքը բաղդատելով յոյներն հայոց հետ, դիտեց թէ՝ մինչդեռ առաջիններն միշտ ազգային գործոց համար նուիրելու ընծայելու յօժարակամ կը գտնվին, հայերն՝ միշտ մի և նոյն պարագայից մէջ կը փախչին, անփոյթ մնալու։

«Վերջապէս Ներսէս պատրիարքն, իւր շուրջը կեցած անձինքն ցոյց տալով, ըսաւ թէ սոքա աղքատ լինելով չեն կարող ուրիշ կերպիւ օգնել ազգային վերականգնման գործին՝ եթէ ոչ իրենց աշխատութեամբն և խելքովն. իսկ հարուստներն՝ որք բնականապէս ներկայ չէին այնտեղ, ոչինչ կը նուիրեն այդ գործին։

«Մի հայ, որ արհեստիւ փաստաբան է կըսեն, այս յանդիմանական խօսքերուն ունկնդիր լինելով այնտեղ, հարկ դատել է դիտողութիւն ընել թէ — «յունաց առատաձեռնութեան պատճառն այն է որ նոքա ինքզինքնին վասն ապագայի մը ուէր կը կարծեն, մինչդեռ հայերը աւելի զգոյշ կերպով կը վարվին, այդ առաւելութիւնը չունենալով»—

«Յիշեալ փաստաբանին ծուխերուն շահուն համար կը բարեմաղթենք որ այդ անձը նոցա դատերուն մէջ աւելի տրամաբանական փաստեր մէջ բերէ, քան այս խօսքերն։

«Պիտի համարձակինք նաև հարցնելու իրեն թէ. արդեօք այն մօտ կամ հեռաւոր ժամանակին ուր հայերն ոչ մէկ բանի կարօտութիւն պիտի ունենան, այն պահուն իրենց մեծատունները ժամը հասած պիտի կարծեն առատաձեռն լինելու։

«Այս մասին յունաց հետ բաղդատութիւնը աւելի ևս կիմարական է, որ ճիշդ յունաց ամենէն անվստահ ժամանակին մէջ է որ նոցա մեծատուններն առատաձեռն գտնուել են։

«Մէկ եղելութիւն միայն բաւական է որ պատմենք։

«Յունաց անկախութեան պատերազմին ժամանակ, պ. Լազար Կոնտուրիօթի (այժմեան Կ. Պօլսոյ յունական դեսպանին հօրեղբայրը), պ. Լազար Կոնտուրիօթի, որ Հիտրայի մէջ մի հարուստ նաւատէր (armateur) էր, իր ամբողջ հարստութիւնը նուիրեց (շուրջ չորս միլիոն ֆրանկ) իւր հայրենակիցներուն ազատութեանը համար։

«Այս հարստութիւնն, որ այսօր մեծ կը համարվի, իսկ այն ժամանակը իրաւամբ հսկայական էր, այս հարստութիւնն՝ որ ընծայել էր ամբողջապէս, ինքն իր կամաւ և առանց ցոյցի. պ. Կոնտուրիօթի միայն իւր ծննդեան տունը պահել էր իրեն՝ և ուր նաև մեռաւ, միշտ համեստ, բայց միշտ իւր հայրենակցաց յարգանքէն հռչակեալ, որոց ազատութեան համար այնքան ազդու կերպով նպաստել էր։

«Այսօր գրիչը ձեռք չառնենք յունաց և հայոց մեծատուր յատկութիւններն միմեանց հետ բաղդատելու համար։ Այս նախնի առաքինութեան օրինակը մէջ բերինք այն պատճառաւ, որ նա ամեն ճարտար պատճառաբանութիւններէ աւելի լաւ կը պատասխանէ այդ հայուն ըրած կիմար դիտողութեան, իբր ի պատասխան իւր ազգակիցն այն դառն բայց արդարացի խորհրդածութեանը։

«Հայերը այսօր չունին վարելու այն պայքարն որ յոյներն ժամանակին ստիպված էին վարել։ Եւրոպան նոցա վիճակին վրայ այնքան հոգատարութիւն ունի՝ որ Պէրլինի դաշնագրութեան մէջ յիշեց նաև այն բարենորոգումներն զորս հարկ է ներմուծել այդ ազգին մեծամասնութեան բնակած երկիրներուն մէջ։

«Նոյն ինքն Բ. Դուռը՝ այս նպատակաւ մէկ քանի գործողութեանց զբաղեցաւ, թէպէտ խիստ անկատար կերպով. զորս և մեք շատ անգամ քննադատեցինք անաչառապէս։ Բայց ինչ որ ալ լինի, դոքա սկզբնաւորութիւններ են, որոց պիտի յաջորդեն անշուշտ աւելի ազդու միջոցներ. բայց այն ժամանակ կարելի կը լինի այդ. երբ նոքա որք հարստութեամբ կամ պատահմամբ այդ ազգին գլուխ եղել են, բարեհաճին քիչ մը թողուլ իրենց խոհեմութիւնն և խնայողութիւնն։ Նոցա այս բնաւորութիւնը առած է զարհել։

«Երբ ատեն եկաւ փոքր-Ասիոյ հայ բնակիչները կերակրել, մենք տեսանք որ հայ ծանօթ անձինք բաւական դժուարութիւն ունեցան օտարների գթասրտութիւնը զրգռելու համար. բայց երբեք չը գիտեցինք որ հայ հարուստները խիստ մեծ զոհողութիւններ ըրին այս մասին։

«Դպրոցներու հաստատութեան կամ բարեկարգութեան ատեն, մենք չենք տեսել սակայ մէկ քանի առատաձեռն նուիրատուներու անուն յիշված, որք նախանձախնդիր լինեն իւրեանց ազգի դաստիարակութեանը նպաստելու։

«Եթէ հայերն կուզեն լինել, այսինքն ապագայ ցեղերուն կարգը հաշուիլ, պէտք է որ մինչև հիմայ ըրածներուն տարբեր կերպով ապացուցանեն թէ՝ իւրեանց մէջ հարուստին և աղքատին միջև համերաշխութիւն կայ և թէ պաշտօններու և գործերու հեռաւորութիւնն նոցա մեծամեծաց բացարձակ զբաղանքը չէ։»

Անաւասիկ օտարազգի մը կարծիքը մեր մեծատուններու, մեր մեծամեծք կոչուածներու մասին։ Եւ երբ մէկ հայ լրագիր, մէկ հայ անհատ, «Մշակը» լինի այն թէ Գ. Նիկողոսեան, կամ մէկ ուրիշ անձ, արդարացի ցասմամբ կը յարձակի այդ անփոյթ և անզգայ արարածներու վրայ, երբ կը ջանայ քիչ մը սթափեցնել նոցա թմրութիւնը, չեն պակաս մեր մէջ «ազգային» պարոններ՝ որք կը կրկնեն թէ նոքա մասնաւոր մէկ նպատակաւ, կողմնակալ ոգւով կը խօսին այսպէս. և նոցա խօսքը ծանր կը թուի, վասն զի նոքա հայ են։

Չեն ուզել որ հայը հային խրատէ և սաստէ, միթէ նախապատուել կը սկսին յանդիմանուիլ և այպանուիլ օտարէն, շատ լաւ. նոցա բաղձանքն սկսաւ կատարուիլ։ Ահա «Ստամպուլը», ահա «Journal d'Orient»-ը որ դառն կերպով պախարակելու երեսին կուտան արդէն թէ մեք անտարբեր կը մնանք մեր խնդրոյն բրօբականդի մասին։ Պէտք չէ զարմանալ եթէ քիչ օրէն ամբողջ եւրոպական լրագրաց մէջ, նոյն իսկ Պարլըմէնտներու մէջ ձայներ բարձրանան ըսելու համար թէ «Հայք անարժան են ամեն կարեկցութեան, թէ նա փճացած, մեռած մէկ ազգ է, որու վերականգնմանութեան համար ոչ և է զոհողութիւն ընելը միամտութիւն է»։

Հայ մեծամեծներն խոհեմ և խնայող են կըսէ օտարազգի լրագիրն։ Մեք «Ստամպուլէն» աւելի լաւ ճանաչելով մեր ազգն, պիտի ըսենք թէ նոքա վատահոգի և ագահ են։ Ամեն տեղի հայ մեծատուններն հարուստ են նիւթապէս, բայց սրտերնին աղքատ է։ Քսակնին ճոխ է, բայց հոգինին գծուծ։ Կ. Պօլսոյ հայ հարուստներն իրենց վատահոգութիւնը ամեն օր ցոյց կուտան։ Մէկը անհուն հարստութեան տէր, թէպէտ յետին աղքատութենէ յառաջ եկած, իւր որդւոյն պսակի արարողութեան համար 3000 ոսկի կը վատնէ և մէկ դրամ կը մոռանայ ազգին աղքատներուն տալու։ Ուրիշ մը նոյնչափ հարուստ, բայց նոյնչափ փոքրոգի, Միացեալ ընկերութեանց տուած 5 դրուշ բաժանորդագինը կը կտրէ, պատճառ բերելով որ վարժապետանոցը գոցեցին։ Մէկը տանիցս մեկնելով կը շինէ և երբ զտիր մէկ քահանայ դուռը կը զարնէ ողորմութիւն խնդրելու համար, իր ծառաներուն ծեծել կուտայ զայն։ Ուրիշ մը տասը հազար ֆրանկ կուտայ իւր ազնիւ կերպարանքը փարիզու Illustration-ի մէջ դնել տալու համար, և անդին Արարատ մայրապետին որբանոցին 10 փարա չտար։ Այսպէս են և ուրիշներն ալ։

Եթէ ձեր մէջ ալ հարուստներն այսպէս են, վայ հայոց ազգին....

Ինչ որ «Մշակն» ըսած է միշտ մեր հարուստներու մասին, անաւասիկ յայտնի է նոցա ճըշմարտութիւնը։ Այսպէս է նաև նորա խօսքերն ազգային ամեն հիմնարկութեանց և գործիչներու վերաբերմամբ՝ Ազգային ժողովէն սկսելով մինչև յետին լրագրին յետին խմբագիրը։

Եթէ ի վաղուց ամեն ազգային հրատարակութիւնք «Մշակին» օրինակին հետևէին և անաչառապէս քննադատէին հայոց բարքերն և անհատներու վարմունքն, գուցէ օտարներէն այսպիսի յանդիմանութիւններ լսելու ամօթէն զերծ կը լինէինք այսօր։

Ս. Ս.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 հոկտեմբերի։ „Порядокъ" լրագիրը հաղորդում է. Պրօֆեսոր Պօնիկօվ նշանակվում է Պետական բանկի կիևի բաժնի կառավարիչ։

ԵԿԱՏԵՐԻՆՈՍԼԱՎ, 28 հոկտեմբերի։ Վաղահաս ձմեռը դադարեցրեց Կրիվօրոժսկայա ճանապարհի վրա աշխատանքները։ Ֆինանսների մինիստրութիւնը մի մասնաժողով է նշանակել պղնձի և բրօնզի տարիֆը քննելու և ներքին արդիւնաբերութեան պղնձի հարկը աւելացնելու համար։

ԲԵԼԳՐԱԴ, 29 հոկտեմբերի։ Սերբիական միտրոպոլիտ Միքայէլը համոզում է Մօյսէս եպիսկոպոսին՝ չընդունել միտրոպոլիտութիւնը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 50 կ., երկրորդ 92 ր. 37 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 220 ր. 75 կ., երկրորդ 215 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 25 կ., երկրորդ 90 ր., երրորդ 90 ր. 12 կ., ոսկի 7 ր. 68 կ.։ Ռուսաց 1 ր. Լօնդօնի վրա արժէ 25,75 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 219 մարկ 75 պֆ., փարիզի վրա արժէ 271 ֆրանկ 12 սանտիմ։ Բորսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ